Ժամանակի հոսանքները զանազան անուններ են տուել այդ աշխարհի մասերին. Գոգ-Տովիտի մի մասը, որ Պարսկաստանին է պատկանում կոչվում է Աւաջուղ. Վարաժնունեաց մասը կոչվում է Զհարդերան. Արտազի մի մասը՝ Բաթալիք. Աւարայրի դաշտի կողմերը առանձին անուն չունին և ճանաչվում են Գարագեադդին գիւղի անունով:

Ցիշեալ դաշտերը մի քանի դաշտեր և հովիտներ ունին, նոցանից Մագուայ դաշտը եզերում է Երասխին հարաւա-արեւելեան կողմից և ձգվում է հիւսիսից դէպի հարաւ մինչև Աւարայրի դաշտը, որից զատւում է մանր բլրակներով. արևմուտքից տարածվում է մինչև Մագուայ ձորը: Այս դաշտը կտրում է Մախաթ լեռների դէպի հարաւարևելք ձգուած շարունակութիւնը: Մախաթ լեռները Մասիսի փոքրիկ բլուրներն են, որին միանում են Դամբատ լեռներով: Մագու դաշտի վերայ զետեղուած են մօտ քսան և հինգ գիւղեր,

---

և զամսոց և զտարեաց բոլորմանց: Քանզի ոչ այսպիսի ինչ ճանաչիւր առ նոսա, այլոց աղգաց վարելով. և ոչ 'ի ծովակս աշխարհիս նաւագնացութիւնք, և ոչ 'ի վերայ գետոց ճանապարհորդութիւնք, և ոչ գործիք ձկանց որսոց. այլ և ոչ յամենայն տեղիս երկրագործութիւնք, բայց դոյզն ուրեք՝ ըստ օրինակի հիւսիսականաց կողմանց շաղղակերութեամբ և այլովք այսպիսիք կեցեալք: Եւ այս ամենայն յորինի յաւուրս Արտաշիսի»:

Խոր. Գէ. Տիթ. էջ. 202.